ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հոկտեմբերի 2008 թվականի N 1269-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ՝ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետությունում արտադրվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ոգելից խմիչքի, էթիլային սպիրտի (ներառյալ շշալցումը) և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար թույլատրելի չափերով տարաների (տուփերի) ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետությունում արտադրվող՝ ակցիզային դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման մասին դիմումի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) ԱՏԳ ապրանքային անվանացանկի 2208 ծածկագրին դասվող՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ մինչև 9 տոկոսը ներառյալ սպիրտայնություն ունեցող սպիրտային խմիչքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ մինչև 0,05 լիտր տարողությամբ կոնյակի և (կամ) գինու արտադրանքը ենթակա չեն պարտադիր դրոշմավորման.

2) Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն ներմուծված էթիլային սպիրտը Հայաստանի Հանրապետությունում մանրածախ առևտրի ոլորտում իրացվում են սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված թույլատրելի չափերով տարաների (տուփերի) ցանկին համապատասխան՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով սահմանված դեպքերի և Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ մինչև 0,05 լիտր տարողությամբ տարաներով իրացվող կոնյակի և գինիների:

3. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված ցանկին չհամապատասխանող տարաներով ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի արտադրության դեպքում դրանք արտադրողներն այդ արտադրանքը դրոշմավորում են հարկային մարմնի սահմանած կարգով:

4. Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բռնագրավված, հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրված և սույն որոշմանը համապատասխան չդրոշմավորված ապրանքների իրացումը կատարվում է ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված: Այդ ապրանքների՝ սույն որոշմանը համապատասխան դրոշմավորման համար պատասխանատու է իրացումը կազմակերպող համապատասխան պետական լիազորված մարմինը: Վերջինիս ակցիզային դրոշմանիշերը տրամադրվում են անհատույց: Սույն կետով նախատեսված ապրանքների դրոշմավորման կարգը սահմանում է հարկային մարմինը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

5. Հարկային մարմինը յուրաքանչյուր տարվա համար անհրաժեշտության դեպքում հաստատում է ակցիզային դրոշմանիշերի նմուշները (էսքիզները), այդ թվում՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձանց և հարկային մարմնի միջև կնքված պայմանագրով նախատեսված ակցիզային դրոշմանիշերի նմուշները: Հարկային մարմնի կողմից հաստատված նմուշից տարբերվող նմուշի դրոշմանիշերով արտադրանքը դրոշմավորելու ցանկության դեպքում՝ արտադրված արտադրանքի դրոշմավորումն իրականացվում է հարկ վճարողի և հարկային մարմնի միջև կնքված պայմանագրին համապատասխան

համաձայնեցված նմուշի ակցիզային դրոշմանիշերով: Յուրաքանչյուր նմուշի ակցիզային դրոշմանիշերի հաստատման, պատվիրման, տպագրման և ստացման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Հարկային մարմնի հետ կնքված պայմանագրով նախատեսված նմուշի ակցիզային դրոշմանիշերը պատվիրում է հարկային մարմինը, և այդ ակցիզային դրոշմանիշերի պատվիրման, տպագրման և ստացման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է հարկային մարմնի հետ պայմանագիր կնքած անձանց միջոցների հաշվին:

6. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերի ստացման, պահպանման, հաշվառման, տրամադրման կարգը հաստատում է հարկային մարմինը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2008 թ. նոյեմբերի 11
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2008 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1269-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ՝ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետությունում արտադրվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների (այսուհետ՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ) ակցիզային դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգը:

2. Արտադրողներն ակցիզային դրոշմանիշերը ձեռք են բերում իրենց հաշվառման վայրի հարկային տեսչությունից (այսուհետ՝ հարկային տեսչություն):

3. Ակցիզային դրոշմանիշերը ձեռք են բերում միայն դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք՝ մինչև այդ ապրանքների՝ սահմանված կարգով իրացումը:

4. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող՝ դրոշմավորման ենթակա էթիլային սպիրտի արտադրանքի համար նախատեսված յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի ձեռքբերման համար վճարվում է 100 դրամ, ոգելից խմիչքի արտադրանքի համար՝ 50 դրամ, ծխախոտի արտադրանքի համար՝ 25 դրամ:

5. Դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողներին ակցիզային դրոշմանիշերը տրամադրում է հարկային տեսչությունը՝ «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով սահմանված կարգով և ժամկետներում:

6. Ակցիզային դրոշմանիշերը տրամադրվում են դրանց ձեռքբերման համար դիմում ներկայացրած անձի լիազորված անձին՝ անձնագիրը ներկայացնելով: Ակցիզային դրոշմանիշերի ստացումը հաստատվում է անդորրագրով՝ համաձայն N 1 ձևի:

7. Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարը համարվում է ակցիզային հարկի կանխավճար, որը մարվում է (հաշվանցվում է) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների իրացմանը համամասնորեն, իսկ սույն կարգով նախատեսված դեպքում՝ հաշվանցվում է հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց և (կամ) վերադարձվում է:

8. Հարկային տեսչությունը յուրաքանչյուր արտադրողի համար վարում է դրոշմավորման ենթակա ապրանքների (ըստ արտադրանքի ապրանքախմբերի) ակցիզային դրոշմանիշերի շարժի (տրամադրման և ընդունման) հաշվառման քարտեր՝ ըստ դրոշմանիշերի սերիաների և թվի՝ հարկային մարմնի սահմանած կարգով:

9. Դրոշմավորումը կատարվում է ապրանքի վրա նախատեսված տեղում փակցնելով ակցիզային դրոշմանիշը՝ N 2 ձևով նախատեսված ձևերին համապատասխան: Ապրանքների դրոշմավորման ժամանակ, բացառությամբ ինքնասոսնձվող դրոշմանիշերով դրոշմավորման դեպքերի, կիրառվում է այնպիսի սոսինձ, որը բացառում է դրոշմանիշը պոկելու հնարավորությունը՝ առանց ապրանքի ապրանքային տեսքը վնասելու: Օգտագործվող սոսինձը պետք է բացառի ակցիզային դրոշմանիշերի բազմակի օգտագործման հնարավորությունը՝ առանց ակցիզային դրոշմանիշի ամբողջականությունը վնասելու:

10. Դրոշմավորված ապրանքի վրա պետք է փակցված լինի չվնասված և ամբողջական դրոշմանիշ:

11. Արգելվում է դրոշմավորումը կատարել N 2 ձևով նախատեսված ձևերին չհամապատասխանող տեսքով: Արգելվում է հաստատված նմուշի դրոշմանիշերի վրա կատարել նշագրումներ (կնիքներով, դրոշմակնիքներով կամ այլ կերպ), դրոշմանիշերը կամ դրա մի մասը ծածկել անթափանց թաղանթներով: Անթափանց թաղանթներով ամբողջովին կամ մասնակիորեն ծածկված (դրոշմանիշի սերիան, համարը և այլ պաշտպանիչ տարրեր պարունակող մասերը) դրոշմանիշերով դրոշմավորված կամ նույնականացնող նշումներով նշագրված (հաստատված նմուշով չնախատեսված նույնականացնող նշումներ ունեցող) դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը համարվում է որպես չդրոշմավորված ապրանքների իրացում:

12. Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերը ենթակա են վերադարձման՝

1) դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լուծարման (գործունեության դադարեցման) դեպքում՝ մինչև լուծարային ակտի ստորագրումը.

2) ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերը 3-ամսյա ժամկետում չօգտագործվելու դեպքում՝ ձեռքբերման օրվանից մինչև 3-ամսյա ժամկետը լրանալու օրը ներառյալ:

13. Սույն կարգի 12-րդ կետի կիրարկման առումով ակցիզային դրոշմանիշերը չօգտագործված չեն համարվում, եթե դրանք սույն կարգին համապատասխան փակցված են դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողների մոտ առկա պատրաստի արտադրանքի վրա:

14. Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի վերադարձման համար հարկային տեսչություններ ներկայացվում են՝

1) դիմում՝ ակցիզային դրոշմանիշերի հանձնման համար՝ առանձին նշելով ակցիզային դրոշմանիշերի վերադարձման պատճառները.

2) ակցիզային դրոշմանիշերի ստացման անդորրագրի պատճենը:

15. Հարկային տեսչությունն ակցիզային դրոշմանիշեր հանձնելու մասին դիմումն ստանալուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է դրոշմանիշերի համապատասխանությունը «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջներին և ընդունում է որոշում օրենքի պահանջներին դրանց համապատասխանության մասին: Դրական որոշման դեպքում՝ ակցիզային դրոշմանիշերի համար վճարված գումարը համարվում է ակցիզային հարկի գերավճար և ենթակա է այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

16. Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի վերադարձը հարկային տեսչության կողմից չի ընդունվում, եթե չեն պահպանվել «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները:

17. Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերը սույն կարգի 12-րդ կետով սահմանված ժամկետներում չվերադարձվելու, ինչպես նաև հարկային տեսչության կողմից դրանց վերադարձը չընդունվելու դեպքերում «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարվում է ակցիզային հարկ:

ՁԵՎ N 1

_____ հարկային տեսչության պետին
(հարկային տեսչության անվանումը)

Ա Ն Դ Ո Ր Ր Ա Գ Ի Ր

ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ

Գրանցման N _____ _____ թ.

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրը)
_____ (բանկային
տվյալները, ՀՎՀՀ, պետական ռեգիստրում գրանցման համարը)

Ակցիզային դրոշմանիշեր՝ _____ հատ՝ _____ գումարի չափով:
(տառերով)

Ընդհանուր գումարը՝ _____ (տառերով)

Ակցիզային դրոշմանիշեր բաց թողնող աշխատող _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ստացավ _____ (պաշտոնը,
անունը, ազգանունը)
1._____ (դրոշմանիշի
տեսակը, սերիան, թիվը)
2._____ (դրոշմանիշի
տեսակը, սերիան, թիվը)
3._____ (դրոշմանիշի
տեսակը, սերիան, թիվը)
4._____ (դրոշմանիշի
տեսակը, սերիան, թիվը)

N _____ լիազորագրով _____ թ.

Անձնագիր _____ N _____, տրված՝ _____

Ստացա _____ թ. _____
(ստորագրությունը)

_____ հարկային տեսչություն

Ստացող կազմակերպություն

Կ.Տ.

ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ



Ցելոֆանապատված ծխախոտի տուփերի համար ակցիզային դրոշմանիշը փակցվում է անմիջապես ծխախոտի տուփի վրա (ցելոֆանի տակ):

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2008 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1269-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ՈՒ ԷԹԻԼԱՅԻՆ ՍՊԻՐՏԻ (ՆԵՐԱՌՅԱԼ ՇՇԱԼՑՈՒՄԸ) ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԵՐՈՎ ՏԱՐԱՆԵՐԻ (ՏՈՒՓԵՐԻ)

Ապրանքի անվանումը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Տարայի թույլատրելի չափը (տուփում գլանակների թիվը)
2204, 2205, 2206, 2208	Ալկոհոլային խմիչք	0,1 լ, 0,125 լ, 0,187 լ, 0,2 լ, 0,25 լ, 0,33 լ, 0,375 լ, 0,5 լ, 0,7 լ, 0,75 լ, 0,8 լ, 1,0 լ, 1,5 լ, 3,0 լ
2207	էթիլային սպիրտ	0,5 լ
2402	Ծխախոտի արտադրանք այդ թվում՝ սիգարետներ՝ ֆիլտրով ծխագլանակներ սիգարետներ՝ առանց ֆիլտրի	 10 հատ, 20 հատ, 40 հատ, 25 հատ, 12 հատ, 20 հատ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2008 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1269-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ՝ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

Արտադրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ապրանքային անվանացանկի	Ապրանքախմբի անվանումը
2204, 2205, 2206	խաղողի և այլ գինիներ
2207	էթիլային սպիրտ
2208	սպիրտային խմիչք՝ բացառությամբ մինչև 9 տոկոս սպիրտայնություն ունեցող սպիրտային խմիչքների
2402	ծխախոտի արտադրանք

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2008 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1269-Ն որոշման

_____ հարկային տեսչության պետին
(հարկային տեսչության անվանումը)

Գրանցման N _____

Դ Ի Մ Ու Մ

ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրը)
_____ (բանկային տվյալները, ՀՎՀՀ, պետական
ռեգիստրում գրանցման համարը)

խնդրում է տրամադրել ակցիզային դրոշմանիշեր՝ ընդհանուր թվով _____

_____գումարի չափով (_____):
(տառերով)

Տվյալ ակցիզային դրոշմանիշերն անհրաժեշտ են՝ _____

1._____ (ապրանքի անվանումը, տարայի չափը, թիվը)
2._____ (ապրանքի անվանումը, տարայի չափը, թիվը)
3._____ (ապրանքի անվանումը, տարայի չափը, թիվը)
4._____ (ապրանքի անվանումը, տարայի չափը, թիվը)

Կազմակերպության կողմից ակցիզային դրոշմանիշերի համար գումարը մուտքագրվել է _____ հաշվին,
_____ վճարային փաստաթղթերով, _____ թ.,

և վճարման գումարը կազմում է _____:
(տառերով)

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգին ծանոթ ենք:

Կազմակերպության տնօրեն _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Կ.Տ.

_____ _____ թ.